նայն տեսողաց, և զի ոչ ինաց և ոչ ինալ կարէ
'ի վերայ հաստատութեան զամենայն զոր ինչ 'ի
յերեսս երկրի ընդ հովանեաւ բնութեան մարդոյ
ոչ կարգ, ոչ կանոն, ոչ հրաման, ոչ հնազան-
դութիւն, ոչ սէր, ոչ թշնամութիւն, ոչ պատիւ,
ոչ նախատինք, ոչ կեանք և ոչ վախճան, եթէ
չիցէ ընթացեալ 'ի ճանապարհաւ և կերպիւ և
համեմատութեամբ բնական բնութեան մարդոյ
'ի զօրութենէ բանական հոգոյ ընտրողութենէ,
եթէ ընթերցող սորայ գուցէ այնքան պատանի, որ
'ի միտս իւր կարի առնուլ՝ թէ զի արդ հրաման
կայսեր և թագաւորաց, որ երբեմն ընդ դէմ բնու-
թեան մերոյ իբրև փայլակ ելանէ և ոչ նայի
համեմատութիւն ինչ բնութեան մերոյ, և կա-
տար հասանի 'ի վերայ նորայ, փոքր խօսիւք ցու-
ցից նշաւակ ինչ վասն հաստատելոյ խօսքն իմ, որ
'ի վեր այսինքն՝ կայսրն հրամայէ զիս առնուլ
թեւս և թռչիլ 'ի հօդս, և կամ զգենուլ փող և
մուծանիլ զիս 'ի խորս ովկիանոս ծով, և բանալ
աչք իմ ընդ դէմ ճառագայթի արեգական քննել
զամենայն, զոր ինչ 'ի միջի նորայ, և ոչ ուտիլ
քառասուն ամ, և ոչ յեղուլ արտաքս 'ի յորո-
վայնէ և այլ նման սորայ ընդ դէմ բնական բնու-
թեան հրամանի, երկայնամիտ լեր ընթերցող, եթէ
'ի վեր փոքրիկ վկայիւք յիշեցուցեալս վասն սի-
րոյ և կամ յերկիւղի և հնազանդութեան կայսեր
կարեսս դու անձամբ անձի կատար հասուցանել,